ՔԱՐՈԶԽՈՍԱՔԱՂ

ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ (9 մայիս 2009 թ.)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն, օր մի»:

(Ծննդոց Ա 5)

Այսպես է բնութագրում կյանքի հաջորդականությունը, շարունակականությունն Աստվածաշունչ մատյանը. ցերեկը հաջորդում է գիշերին, կյանքը՝ մահվանը, լույսը՝ խավարին, եւ վերջապես հաջողությունը եւ հաղթանակը հաջորդում են դժբախտություններին ու պարտություններին:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, շուրջ փասը օրեր առաջ մեր սրտերը միացան ցավի եւ ողբերգականության զարկերով: Ոմանք անձամբ՝ իրենց ներկայությամբ, ոմանք մտովի քայլեցին դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը՝ հարգանքի եւ խոնարհումի փուրք մատուցելու ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Աղոթեցինք նրանց հոգիների հանգստության համար, սրտառուչ աղոթեցինք, որպեսզի Տեր Աստված երբեք նման փորձությունների, նման դժբախտությունների այլեւս չմատնի մեզ: Եւ ահա ապրիլյան օրերից հետո մենք մուտք ենք գործել մայիս ամիս, մայիս, որ մեր պատմության մեջ, մեր ժողովրդի գարեգրության մեջ հատկանշվում եւ հատկորոշվում է որպես հաղթանակների ամիս :

Այսօր ազգիս Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը Երեւանի Հաղթանակի այգում պետական ավագանու բարձրաստիճան ներկայացուցիչների հետ, ՀՀ նախագահը՝ Լեռնային Ղարաբաղում՝ ազատագրված Շուշիում, Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության հետ հարգանքի եւ աղոթքի իրենց խորհրդածություններն ուղղեցին Աստծուն, հաղթանակի զոհերի հիշատակին՝ վերստին ամրապնդելով մեր ժողովրդի ուխտը՝ ընթանալու հաղթանակից հաղթանակ:

Եւ այսօր մենք՝ որպես միակամ, միասիրտ ժողովուրդ, հավաքվել ենք այստեղ՝ Աստծո հետ հանդիպման նվիրական այս ժամադրավայրում եւ ուխտավայրում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ վերստին մեր աղոթքը, մեր խորհրդածություններն ուղղելու հաղթանակի զոհերի հոգիների հանգստության համար:

Այո՛, մենք՝ որպես քրիստոնյաներ, հաղթել գիտենք, հաղթել գիտենք, որովհետեւ գիտենք նվիրական գաղափարների համար Աստծուց մեզ պարգեւված կյանքն արժանապատիվ ապրելու համար մեր կյանքով եւ արյամբ վճարել, մեր նվիրական սրբությունների ու սրբավայրերի համար: Մենք, 1941-1945 թթ. նախկին Խորհրդային Միության կազմում

փոքր հանրապետություններից մեկը լինելով, առավելագույն թվով մասնակցություն բերեցինք: Զոհվեցին շուրջ 40-50 միլիոն մարդիկ, որոնց մեջ նաեւ բազում հայորդիներ, ովքեր որ բնավ աննշան դեր չխաղացին հաղթանակի կերտման եւ հաղթանակի ապահովման գործում: Անցան տարիներ եւ հաղթանակի խորհուրդը համալրվեց Շուշիի ազատագրման նշանակալի հաղթանակով: Տասնյոթ տարիներ առաջ հայորդիները, վերստին զինված հավատքի վահանով եւ խիզախության սուսերով, գրոհեցին արցախյան Շուշի նշանավոր բերդը, եւ Շուշին վերջապես ազատագրվեց պարտադրված գերությունից:

Ահա այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ մեր խոնարհումի տուրքը մատուցելու այդ հաղթանակները կերտած, զոհված անձերի հոգիների հանգստության համար: Եւ ուրախ ենք, որ այդ խոնարհումի տուրքը այսօր մեզ հետ կիսում են հայրենիքից եւ սփյուռքից ժամանած բազում հայորդիներ: Այստեղ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ կատարվող հոգեհանգստյան այս արարողությունն ի հիշատակ եւ ի հանգիստ Հայրենական պատերազմում զոհված անձերի եւ Շուշիի ազատամարտի, Շուշիի հաղթանակի համար զոհված անձերի հոգիների հանգստության համար: Ուրախ ենք ողջունելու ներկայությունը Հայաստանի «Հայաստան համահայկական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին, մեր բարերարներին, նվիրյալ հայորդիներին՝ Միացյալ Նահանգներից, Կանադայից, Սուրիայից եւ աշխարհի չորս ծագերից, որոնց այսօր հաղթանակի եւ միասնության ոգին համախմբել է, եւ այս միասնականությամբ է, որ հրավիրում ենք ամենքին մասնակցություն բերելու, աղոթակցելու Նորին Սրբության կողմից հանդիսապետվող հոգեհանգստյան այս արարողությանը: Խունկ, օրհնություն բյուրավոր մեր նահատակների՝ հաղթանակը կերտած հայորդիների հիշատակին եւ աղոթք նրանց հոգիների հանգստության համար. Ամէն